

ՀՌԿԿ 2008թ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Չբաղվեք հետազոտությանը, բացահայտեք հիմնախնդիրներ, բավարարեք ձեր հետաքրքրասիրությունը, հրատարակեք, ստեղծեք հետագա հնարավորություններ

ՀՌԿԿ-ն նախապատրաստում է հետազոտական դրամաշնորհների մի նոր պարբերաշրջան: Դուք հետաքրքրված ե՞ք որևէ հասարակագիտական հիմնախնդրով: Ունե՞ք գաղափարներ կամ հիպոթեզներ, որ կուզենայիք ավելի խորը ուսումնասիրել: Այս դրամաշնորհը կարող է Ձեզ տալ այդ հնարավորությունը:

Ո՞ր հիմնախնդիրներն ենք համարում գերակա

Մենք ակնկալում ենք մեր երկրի հրատապ հիմնախնդիրներին վերաբերող հասարակագիտական հետազոտություններ: Այսպիսի հրատապ հետազոտական օրակարգի մասն են կազմում, օրինակ [Հազարամյակի զարգացման նպատակները](#): Այլ նախընտրելի հիմնախնդիրներ կարող են համարվել մանկական աղքատությունը, միգրացիան և ժողովրդավարացման գործընթացները: Մենք հետաքրքրված ենք նաև [ՀՌԿԿ «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն»](#) հետազոտության բազայի վրա հիմնված վերլուծություններով: Մենք կարող ենք նաև օգնել Ձեզ զարգացնելու այն վիճարկելի գաղափարները, որոնց շուրջ մտադիր եք իրականացնել բարձրակարգ հետազոտություն: Նախորդ տարիներին մեր դրամաշնորհառուների ուսումնասիրության առարկա դարձած հետազոտական նյութերին ծանոթանալու համար կարող եք այցելել հետևյալ ինտերնետային կայքերը. crrc-caucasus.blogspot.com կամ <http://crrc.am/index.php/lo/17/73>:

Ի՞նչ հիմնախնդիրներ նախընտրելի ՉԵՆՔ համարում

Մենք կողմնակից ենք նորարարական գաղափարների և ծրագրերի, սակայն չենք սատարում, մասնավորապես, աշխարհաքաղաքական և գուտ քաղաքական թեմայով հետազոտությունները, կամ հստակ նպատակաուղղվածություն չունեցող, խիստ տեսական ուսումնասիրությունները, որոնք չեն հիմնվում առկա ծանրակշիռ հրապարակումների վրա: Մենք նախընտրում ենք այնպիսի հետազոտություններ, որոնք կարող են իրական ազդեցություն ունենալ մարդկանց կենսամակարդակը բարելավելու վրա:

Ի՞նչ արդյունքներ ենք սպասում

Մենք ակնկալում ենք միջազգային մակարդակի հետազոտություն: Դուք պետք է հետամուտ լինեք տպագրելու Ձեր հետազոտությունը որևէ գրախոսվող ամսագրում (մենք կօգնենք գտնել այդպիսին): Սա Ձեր հետազոտությանը միջազգային ճանաչում կբերի: Մենք Ձեզ կօգնենք համապատասխան ամսագիր գտնելու հարցում, որին կարող եք ներկայացնել Ձեր աշխատանքը: Մենք նաև ակնկալում ենք, որ Ձեր աշխատանքը կպարունակի հանձնարականներ, որոնք կներկայացվեն մեր երկրում Ձեր հետազոտության արդյունքներով հետաքրքրված շահագրգիռ կողմերին (միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ, պետական կառույցներ): Ցանկալի է, որպեսզի հետազոտության մեջ օգտագործեք ՀՌԿԿ «Տվյալների հավաքագրման նախաձեռնության» տվյալները:

Ու՞մ է հասցեագրված հետազոտական դրամաշնորհը

Դուք խորաբախանց, պրպտող ու հետաքրքրասեր եք, և ցանկանում եք օգտագործել Ձեր բոլոր ունակությունները: Որպես կանոն, Դուք առնվազն մագիստրոսի կոչում ունեք ու ցանկանում եք

զարգացնել Ձեր հետազոտական ունակությունները՝ հասնելով գերազանցության: Բացառված չէ, որ Դուք աշխատում եք մեկ այլ բնագավառում, բայց ուզում եք վերադառնալ հետազոտական դաշտ՝ գիտակցելով այստեղի երկարաժամկետ հնարավորությունները: Մեր պահանջներից է անգլերեն լեզվի աշխատանքային իմացությունը, քանի որ Դուք ցանկանում եք տպագրել Ձեր հետազոտությունը միջազգային մակարդակով: Բացառություններ կարող են արվել նրանց համար, ովքեր կատարելու են քանակական հետազոտություն կամ ընտրանքային հարցում: Ցավոք, այս դրամաշնորհը նախատեսված չէ արտասահմանում կամ արտասահմանցիների կողմից հետազոտություններ կատարելու համար:

Ի՞նչ եք Դուք ստանում

Նախ և առաջ Դուք կստանաք բավարարվածություն գերազանց աշխատանք կատարելուց և Հարավային Կովկասի միջազգային ճանաչում ունեցող հետազոտողների փոքր, բայց եռուն համայնքի մի մասը կազմելուց: Ավելին, Ձեր աշխատությունը միջազգային ամսագրերում տպագրվելուն կհետևեն բազմաթիվ նոր հնարավորություններ: Հետազոտական դրամաշնորհը հնարավորություն կտա սպացուցելու Ձեր արհեստավարժությունը, ինչը նպաստավոր կլինի հետագայում կարիերայի համար (օրինակ՝ աշխատանքի, համատեղ հետազոտական ծրագրերի, գիտաժողովների մասնակցելու համար դիմելիս): Կախված Ձեր հետազոտական ծրագրից, դրա իրականացման համար Դուք կարող եք ստանալ 2000-ից մինչև 4000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ (սոցիոլոգիական հետազոտություններն, օրինակ, կարող են ավելի ծախսատար լինել):

Արդյո՞ք դա հեշտ է

Ե՛վ այո, և՛ ոչ: Մենք կօգնենք Ձեզ ամեն քայլափոխին: Բայց դրանք, անշուշտ, հեշտ տրվող միջոցներ չեն: Հետազոտություն իրականացնելիս Դուք մշտապես բախվելու եք նոր խոչընդոտների՝ կայացնելով դժվար որոշումներ: Սակայն, հետազոտություններն հենց այդ պատճառով էլ արվում են: Այն պահանջում է վճռականություն և համառ աշխատանք: Հուսով եմք, որ Դուք կմիանաք մեզ բացահայտման այս գրավիչ գործընթացում:

Ինչպե՞ս նախապատրաստվել

Հայտադիմումների ընդունման մեր մշակած հատուկ ընթացակարգը նպատակ ունի օգնել Ձեզ զարգացնելու Ձեր հետազոտական հայտ-առաջարկը: Հավելյալ մանրամասների համար այժմ կեք (մինչև 2008թ. հուլիսի 18-ը) գրեք մի հակիրճ էլեկտրոնային նամակ մեր աշխատակից Մելիսսային՝ melissa@crccenters.org էլ. հասցեով, նշելով Ձեր հետաքրքրությունների ոլորտը կամ թեման: Մեր պատասխանում Ձեզ կտեղեկացնենք հաջորդ քայլի մասին և կիրավիրենք քննարկելու Ձեր գաղափարները բաց դռների օրերին:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնադրված ռեսուրսների և ուսուցման կենտրոնների ցանց է, որի նպատակը Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտությունների ու պետական քաղաքականության վերլուծության խթանումն է: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների համագործակցությամբ գործող այս ծրագիրը կոչված է ապահովելու բարձրորակ հետազոտական ռեսուրսների մատչելիությունը, զարգացնելու հետազոտական կարողությունները և նպաստելու հասարակագետ հետազոտողների և քաղաքական գործիչների միջև երկխոսությունն ու գործակցությունը: Մեթոդաբանական դասընթացների կազմակերպման հետ մեկտեղ, ՀՌԿԿ-ն տրամադրում է հետազոտական դրամաշնորհներ և իրականացնում է տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն: Մանրամասներ համար այցելք www.crccenters.org.